

րան գազան ախտերու ոտնատեղիքէն կը փախչէր, Գոթը անոնց դիմացը կ'եւ լէ կերակուր ըլլալու. վտանգները ոտքին տակը տեսնելով չգիտեր թէ ինչ ճար ընէ անոնցմէ խալըսելու: Ս'արդս թշնամիէն փախչելով չխալըսիր, պէտք է դիմացը արիւթ թէ կենայ ու կռուուի. ապա թէ ոչ, փախչիմ ըսելով աւելի մեծ որոգայթներու մէջ կը բռնուի, և վերջի յուսահատութեամբ իր օրերը անիծելով կը մեռնի:

Արեւմտեան, բարի ընթերցող, թէ որ որդւոց տէր ես, նայէ որ աղէկ դաստիարակութեամբ քու տղոցդ տգիտութեան մէջը փարատելու ճար ընես, որպէս զի իրենց քալելու ճամբան տեսնեն, և վտանգներէ կարենան ըզգուշանալ: Փարատէ մէջը կ'ըսեմ՝ ուսմունք ու գիտութիւն սորվեցընելով, որպէս զի արդարութեան լուսաւոր ճամբէն չխոտորին, ուրախ ու խաղաղ սրտով ուղիղ ճամբէն քալելով հասնին ու ելլեն երանութեան բլուրը, և հոն պարգևողին ձեռքէն ընդունին իրենց վայելուչ պսակը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկու տարիէն ի վեր է որ զանազան բարեսէր անձինքներէ յորդորանք կը լսենք խօսքով և գրով՝ որ աս մեր Ղազմավիպին մէջ գոնէ երբեմն երբեմն հաւատոյ վերաբերեալ խնդիրներ ալ դնենք, որպէս զի աւելի պատուաւոր ու օգտակար ըլլայ մեր աշխատանքը: Այսպիսի բարեսիրտ և ճշմարտասէր անձանց պէտք եղած պատասխանը թէպէտ ըստ ժամանակին տուեր ու զիրենք գոհ ըրեր ենք, բայց առանձին թղթակցութեամբ լմնցեր է բանը. և մեր ուղածն ալ ան էր: Բայց որովհետեւ մօտերս նոյն առաջարկութիւնը և յորդորանքը ուրիշ այլևայլ տեղերէ ալ կը լսենք, հարկ համարեցանք որ մեր պատասխանը հոս համառօտ կերպով մը հը-

րատարակենք, որպէս զի ամէնքն ալ իմանան:

Յայտնի է ամենուն՝ թէ որ և իցէ բան կամ աշխատութիւն ան ատենը գովելի՝ պատուական ու օգտակար կ'ըլլայ, երբոր թէ վախճանը բարի է, և թէ ան բարի վախճանին հասնելու համար եղած աշխատութիւնը յարմար է: Երբ ներհակ, վախճանը չար ալ չըլլայ նէ, երբոր ան վախճանին հասցընող ճամբան կամ միջոցը ծուռ է, ան աշխատութիւնը պէտք է որ անօգուտ՝ ֆիաստակար ու պարսաւելի ըլլայ: Հիմա մեր Ղազմավիպ անունով օրագիրը հաննելուս վախճանը ինչ է. բայց եթէ, ինչպէս որ առաջին յայտարարութեան մէջ ալ ըսինք, ասով որ և իցէ ուսումնական, տնտեսական ու բանասիրական տեղեկութիւնները բոլոր մեր ազգին մէջ դիւրին կերպով մը ծաւալենք: Իսկ աս վախճանիս հասնելու համար ինչ ո՞՞ր բռնեցինք ինչուան հիմա՝ ուրախ ենք որ շատին ու գրեթէ ամենուն հաճոյ եղեր է, թէպէտ և օրէ օր աւելի ալ կրնայ կատարելագործուիլ, ու մեր ազգին կարօտութիւնները լեցընել: Իսկ մէկը՝ թէ հապա հաւատոյ խնդիրներուն կամ խորհուրդներուն տեղեկանալու կարօտ չէ՞ մեր ազգը: — Եւ շատ կարօտ է, մանաւանդ աս թշուառ ատենիս՝ որ սուրբ հաւատոյ հիմունքը քանդող սկզբունքներ, և պաղ պաղ ու ծուռ ու մոռ վարդապետութիւններ սկսեր են սերմանուիլ մեր խեղճ ազգին մէջ: Բայց միթէ այսպիսի թեթեւ գրուածք մը՝ որ կենդանիներու, ճշիններու, գործիքներու, արհեստներու, կատակներու, առականերու, երազներու վրայ կը խօսի (թէպէտ և բարի և օգտակար վախճանով), արժան է որ սուրբ հաւատոյ սարսափելի խորհուրդներուն վրայ ալ բերան բանայ. կը վայլէ որ աստուածաշունչ սուրբ գրոց պատկառելի խօսքերուն վրայ մեկնութիւններ տայ. կը վայլէ որ աստուածաբանական բա-

րակ խնդիրները այսպիսի տետրակով մը ինչուան կանանց ու տղոց դատմունքին ու խօսակցութեանը նիւթ ընէ : Վիտենք թէ իրչափ ալ աղէկ տեղեկանայ ժողովուրդ մը սուրբ հաւատոյ մասանցը, բաւական չէ . բայց միթէ կարելի չէ՞ նոյն հաւատոյ մասունքը առանց աս կերպով անպատիւ ընելու կամ թէ լղբոջակելու (ներեն կարգացողները աս բառիս) հաղորդել ժողովրդեան : Եւ միթէ հաւատոյ խնդիրներ, աստուածաշնչի պատմութիւններ, սուրբ գրոց մեկնութիւններ ինչուան հիմա մանր ու խոշոր գրքերով չեն ելած, և հիմայ ալ օրէ օր չեն ելեր, և մանաւանդ ասկէ ետքն ալ չեն կրնար ելլել : Սէկ ողջամիտ քրիստոնեայ ազգ մը չկայ Եւրոպացւոց մէջ, որ հաւատոյ սուրբ խորհուրդները օրագրի կամ լրագրի նիւթ ընէ : Եւ թէ որ կան իրենց մէջ օրագիրներ՝ որ եկեղեցական նիւթերու վրայ կը խօսին, աղէկ գիտնալու է որ անոնք դոսի լուրեր ու թեթեւ տեղեկութիւններ ամենեւին չեն տար . որով աւելի մասնաւոր գրքերու կարգը կ'անցնին՝ քան թէ օրագրութեանց : Իսկ մեր հասկըցած և մեր ազգին հարկաւոր ու օգտակար ճանչցած օրագիրը ան է՝ որ իրչափ կարելի է շատ բանի վրայ ստոյգ տեղեկութիւններ տայ՝ պարզ, դիւրիմաց ու զուարճալի ոճով : — Եւ չափ համոզուած ենք մենք աս բանիս, որ կը խնդրենք բարեսէր ընթերցողներէն որ ասկէ ետքը աս առաջարկութիւնը չընեն մեզի . մանաւանդ թէ մեր քրիստոնէական ու քահանայական վիճակին պարտքը կատարելու մտքով՝ կ'աղաչենք որ այնպիսիները ոչ միայն զմեզ անմեղադիր ընեն աս նիւթիս մէջ, հապա նաև զուրիշները համոզեն՝ սուրբ հաւատոյ խորհուրդներուն և սուրբ գրոց խօսքերուն պատիւը պահելու, և ուրիշներուն ալ պահել տալու :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՅ

Երածիք :

Ընչապտուկն ապուշնայ,
Նոխազ մորուեղ
Ու էշ ականջեղ
Եւ արջ թաթեղ ընդ նոսա,
Դաշնակաւոր խնդրեցին երգ յօրինել .
Գլտին թըմբուկ ծակ և գավին կիսաթել,
Տիկ խըլաձայն, և սրինդ ջախջախ միջաբեկ,
Նըստան 'ի մարդ, յուռույն 'ի ստուեր գիւրաթեք :
Հարկանէին ջանիւ զանցնիր ըզգործին,
Բայց արտանուագ երգոցն ձայնք հընչէին :
Ի վեր վաղեալ անդէն ճապուկըն կապիկ,
« Կացէք, ասէ, զուր մըրցակիցք իմ ճըգնիք .
Իբր իցէ մարթ նուագաց մերոց գոլ գաշնակ,
Մինչ խառն 'ի խուռն մեք նըստիմք այսգունակ .
Դու արջ եղբայր, նիստ քո թըմբկաւ ընդ ալմէ,
Փողարն իշակ թող բազմեսցի 'ի ձախմէ .
Ես նոխազին նըստայց հանդէպ աստանօր,
Հապա նըագս առեալ հարցուք նորանօր » :
Փոփոխեցան տեղիք, այլ ոչ եղանակք .
« Ոչ այդպէս օչ, էշն անդ գոչեաց, բարեկամք .
Գեղօնս ընտիրոս թէ կամիք գեղեղեղել,
Հարկ ըստ կարգի աւագութեան է բազմել » :
Զուր անսացին իշոյն խրատու և յարեան .
Դարձեալ աղմուկ, գարձեալ չըփոթ խառնաձայն :
Անդ ուռնուոյն յանկարծ 'ի յոստ էջ սոխակ .
Սքքա անդէն բարձեալ առ նա աղաղակ,
« Ողջամբ եկիր, խօսնակդ, արա մեզ չընորհ,
Դիր կարգ 'ի մեզ, զի նուագքս իցեն գաշնաւոր .
Են ահա վինք առ մեզ և տիկ և թըմբուկ,
Միայն ասա թէ մեք զնորդ բազմեսցուք » : —
« Առ յօրինել, ասէ, նըագ գեղեցիկ,
Ճարտարութիւն խնդրի և կիրթ լըսելիք .
Իսկ դուք եղբայր որպէս զնորդ և նըստիք,
Ոչ լինիցիք երբէք ճարտար երգեցիկք » :

ՔՈՒՆԼՈՎ .

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ :

Ապերախտութիւնը այնչափ ցած ու անարդ պակասութիւն է, որ մէկը չէ եղած ինչուան հիմա որ սրտանց խոստովանի թէ ինքը ապերախտ է : Ծղմարտութիւնը մեղի հետ ծնած է . ուստի առանց մեր բնութեանը վրայ բռնութիւն ընելու չենք կրնար ճշմարտութիւնը թողուլ, ու ստուութեան ետեւէն երթալ : Աղքատը քանի մը բանի կարօտ է . իսկ ազա՛ջ ամէն բանի կարօտ է : Սոկրատայ հարցուցին թէ երջանիկ ըստելու մարդը ո՞րն է . — Ով որ քիչ բանի կարօտ է՝ ան է ըսաւ : Բարի անունը մէկ ամուր բերդ մըն է՝ որ անով մարդս շատ նեղութիւններէ ու շատ մեղքերէ ալ ազատ կը մնայ :